հայրապետիս մերո Աղեքսանդրի, Հռոմա, Անտիոքո և Եփեսոսո. որ էին ի քո հիպատին պայծառ և համադաւան, իսկ ի յարդիս զաչացուք և պակասեալք, չքաւորեալ և աղքատացեալք։ Եւ մեք ի [Թղ. 18 բ] նոյն կացեալք անշարժք և անվրդով՝ յիսկզբանէն և յառաջինն՝ յաւանդութիւն և ի սահման առաքելոյն շինեալք և ամրացեալք։ Քև աւժանդակեալք՝ խարսխեալք և հաստատեալք, զի թէ ոչ Տեառն զաւրութեանց թողեալ էր զքեզ մեզ զաւակ՝ եղեալ էաք իրրև զՍոդոմ և զԳոմոր, այսինքն զորս յիշեցի նախ։

Քանզի չէ և չէ ազգ անբիծ և անարատ ի հաւտըս և ի գործս բայց ի մէնջ։ Զի թէպէտ և քաղաքաւ և առաքելաւ և բազմութեամբ պանծան՝ սակայն ոչ տեղեաւ ընտրի ոք՝ և ոչ ընդ բազումն հաճի Տէր։ Զի լաւ է մի կամարար Տեառն քան զբիւրս զանցեալ։ Եւ որ զգործս Աբրահամու գործէ, նա է որդի նորա. նոյնպէս և որ զսահմանս առաքելոցն պահէ՝ նա է աթոռակալ նոցա։ Ապա թէ այսպէս է՝ մեր աթոռ է վեհագոյն ամենեցուն, հաւասար աւետարանչաց և աշակերտաց. զի զնոցայն չբէ ուղի։ Եւ զայս քև ունիմք, ով երանելիդ Մեսրոբ՝ որ բացատրիս՝ տէր սուրբ և սեփական։

Քև երանելի եղև աշխարհս մեր. պերճ